

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմ. 8 ՄԼՃ.
Վեցամսեայ Կ. Պոլսոյ հմ. 4 ՄԼՃ.
Չամսեայ Կ. Պոլսոյ հմ. 3 ՄԼՃ.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ երկու անգամի հա-
մար 2 դուրուշ աւելի անգամներու
համար դատ ստիարիութիւն կը-
լայ :



ԼԵՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 4 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսը Դանուբէն անցնէր են թէ ո՛չ, այս է օրուան խնդիրն, որոյ վը-
րայ ստոյգ լրաց կ'ապաստուի : Լէվընթ
Հէրբլոմ լրագիրը զրոյց մը կը յիշէ որ-
պէս թէ անցեալ երեքշաբթի օրը Մա-
շինէն վաթսուէն հազար ուսուսանող
ըլլան Դանուբին Օսմանեան ախուսը՝
45000 հոգի զոհելով, բայց յիշեալ
թերթին ինք ալ այս զրոյցին հաւատ
չընծայեր և կը կարծէ որ Ռուսերը
Դանուբի մէջ գտնուած կողմերը
գրաւած ըլլան : Ինչ որ ըլլայ այս
զրոյցին կարեւորութիւնը, Դանուբի
կողմն այսօր վաղը մեծամեծ դէպքեր
կ'ապաստուին :

Ասիոյ կողմէն նշանաւոր նոր լուր
մը չկայ, բայց վիճակին ծանրութիւ-
նը կը շարունակէ : Ինչպէս արդէն
ասկէ առաջ ալ գիտողութիւն ըրած
էինք, Ասիոյ կողմը պատերազմի առ-
պարէն Հայաստան ըլլալով բնակա-
նաբար մեր խորին ուշադրութեան ա-
ռարկայ ըլլալէ չկրնար վրիպիլ : Կաս-
կածներ կային թէ հոն Ռուսը երկ-
րակալութեան դիտաւորութիւններ
ունին, քանզի Եւրոպական տէրու-
թիւններն անմիջական շահեր չունին
հոն, բայց յիշեցնենք, որ դէպքերն
ի մօտոյ զինելու համար զինուորա-
կան յատուկ պաշտօնատար մը՝ Սըր-
բէմալ զօրավարը զրկեց Ասիոյ Օս-
մանեան բանակը : Լոնտոնայի Ռուսա-
կան դեսպան Շուվալովի կողմը Բեդ-
ընպուրիէն իւր պաշտօնատեղին վե-
րադարձաւ, և եթէ Նոս լրագրին
հաւատալ պէտք է, Շուվալովի կողմն
ապահովութիւն պիտի տայ եղեր Անգ-
ղիական կառավարութեան թէ Ռու-
սիոյ նպատակը մի միայն քրիստոնէից
վիճակին բարեփոխումն է : Եթէ այս
խօսքը դառն հեղինակութիւն մը չէ,
չենք զիտեր թէ Ռուսիա ասկէ դատ
խաղան ապահովութիւններ և երաշ-
խաւորութիւն մը տուած է երկրա-
կալութիւն չընելու : Շուվալովի կողմ
սին սոսկ խոստումնայ արժէքը գիտենք :
Խիվայի արշաւանքին ժամանակ ալ
այնպիսի հանդիսաւոր խոստումներ
տուած էր, բայց և այնպէս Ռուսիա
մեծ մաս մը զրաւեց այն երկրին :
Ասոր համար է որ Ռուսիոյ նպատակ-
ներուն վրայ հասարակաց կարծեաց
իրաւացի կասկածները չեն կրնար ցը-
րել, և որովհետեւ իւր անյադ փա-
ռասիրութեան նոր օրն Հայաստանի
մէջ մեծ մասը կրնայ ըլլալ, չենք կըր-
նար առանց դիտողութեան թողուլ
այս կէտը : Դանուբի վերաբերեալ Գի-
այալիսի երկրակալութեան համար
ընդհանուր քուէարկութեան սկզբուն-
քը հնարած էր, որ թէ և անկեղծ չի-
նէր, դո՛ւն առ երեւոյթ ժողովրդական
կամքն յարդ երև տրամադրութիւն

ներ կը ցուցնէր : Եթէ այսօր ալ քը-
ւէարկութիւն մ'ըլլայ, տարակոյս չը
կայ որ Հայք և իսլամը օտարի տի-
րապետութիւնը կը մերժեն : Ասիոյ
մէջ Հայք Օսմանեան իշխանութիւնն
իւր պահպանութիւններով հանդերձ
նախաձեռնար կը համարին Ռուսիոյ
բռնապետութեան Հայոց գտնադա-
տները կառավարութեան դէմ չեն և կըր-
նան կառավարութիւններ և դաւա-
ռական բարձր պաշտօնները մեծ մա-
սամբ Հայոց վրայ ամեն ժամանակ հա-
մակարկութիւն ցոյց տուած են, և անոնց
անյիշելի հաւատարմութեան արժէքը
գիտնալով, միշտ պաշտօնաւոր են զա-
նոնք : Հայոց բոլոր դատաւանները քա-
նի մը Բիւրոյ Տէրէպէլին ետեւ և ար-
տաղանց ստորին պաշտօնատարներու
դէմ է, որոց զեղծութիւններուն վերջ
տալու հաստատ գիտաւորութիւն ու-
նի կայսերական կառավարութիւնը :
Արդէն կառավարութիւնը յատ ան-
գամ այնպիսիները պատժոյ ենթար-
կած է, և եթէ հակառակ իւր ջա-
նից՝ տակաւին դաւառական հարցա-
տահարութիւններն ու զեղծութիւնները
վերջացած չեն բոլորովին, ասոր պատ-
ճառը Ռուսիա ալ կրնայ համարուիլ
որ անպիտան խնդիրներ յարուցանե-
լով ժամանակ շտապ կառավարութեան
ներքին կարգաւորութեան և բա-
րենորդմանը գործադրութեամբ ըզ-
բաղել ինչպէս որ արժան է : Ո՞վ կըր-
նայ հաստատել թէ Հայոց վրայ գոր-
ծուած բռնութեանց և հարստահա-
րութեանց անուղղակի հեղինակը
Ռուսիա չէ : Երկրայ պատերազմն ա-
նակնկալ երողութիւն մ'ալ ի վեր
հանեց, այն է թէ Հայերը կեղեքող
Բիւրոսներն տեղի Ռուսիոյ բարեկամ
են եղեր քան թէ Օսմանեան կառու-
թիւններն, և Մէլիքովի զօրավարն
անոնց մեծերուն հետ հին յարաբե-
րութիւններ իսկ ունի եղեր : Բնտի
Բիւրոսները վիտանակ Օսմանեան կա-
ռավարութեան օգնելու, ինչպէս ի-
րենց պարտն էր, ո՛չ միայն իրենց
ժառանգութիւնը կը զրանան, այլ և
ներկայ վրդովեալ ժամանակներէն օ-
գուտ քաղելով յայտատարութիւն իսկ
կը դիմեն եղեր : Այսպիսի վատու-
թիւն մ'անյուստի չէ անգլէն և խա-
ղապ ժողովրդաց վրայ ամեն տեսակ
բռնութիւն ու աւարաւորութիւն ընող
աւաղակներէ :

Բայց Հայոց համար ժամանակ է
առ կայսերական դահն ունեցած ան-
յիշելի հաւատարմութիւններն գործով
ապացուցանելու : Մեր ազգը ներկայ
պատերազմին մէջ նիւթական մեծ
օգնութիւններ տուաւ կառավարու-
թեան : Հայաստանի գիւղացիքը որ
Օսմանեան Կառավարութեան իշխանութեան
համար շատ ժառանգութիւններ մա-
տուցած էին, երկու տարիէ ի վեր
աւաղակները փոխադրութեան և զօ-
րաց պայքար տարու մասին քիչ չօժան-
դակեցին : Կայսրոյ օչ չէ Հայ կամաւոր

զինուորական ծառայութեան մտած
են : Բայց այս ջանքերուն ընդհանուր
կերպարանք մը տալ պէտք է : Հա-
յաստանի պաշտպանութեան համար
Հայերն ալ իրաւունք ունին պահան-
ջելու որ մինչեւ ժամանակ կայ,
Հայ լեզուն մը կարծուի : Ստոյգ է
որ վիճակաւ զինուորագրութիւնն ան-
գործադրելի համարած էինք առ այ-
ժմ, քանզի քանի մը յաջողակներու
հետ շատ մ'ալ տկարներու և երկ-
չտաններու կրնար հանդիպիլ : Բայց
ո՞վ կարող էր ինքնոյժօր կամա-
ւորներէ ազատ լեզուն մը կարծել :
Այսպիսի յօժարակամ անձինք կրնան
միանալ և ինքրել որ կառավարու-
թիւնն իրենց զինուորական բարձր
պաշտօնատար մը հրամանատար կար-
գէ, որպէս զի անմիջապէս զինուո-
րական վարժութեան սկսին : Կար-
ծենք բնաւ արդէք մը չկայ նաեւ որ
Հայոց ազգն իւր ծախիւք այսպիսի
լեզուն մը կարծէ, և պատերազմէն
ետեւ Հայաստանի վիճակին իրական
բարենորոգմանը ձեռնարկէ :

Այսօր մեզ համար կենաց և մա-
հա խնդիր մ'է այս : Եթէ Ռուսիա
յաջողի Հայաստանէն մեծ մաս մ'ալ
կորցել, Հայոց ազգութեան, լեզ-
ուն, եկեղեցւոյն, աւանդութեանց,
բարուց և ազատ զարգացման վերջին
օրն է : Խոհանարարաբար ապրելու,
և բարոյապէս ու մտաւորապէս յա-
ռաջդիմելու քաղցր յոյսերն հրա-
ժեշտ տալու ենք : Սլավեան մասնա-
ժողովոյ նախագահ Պ. Աքսաքովի
Մօսքուայի մէջ ըրած յայտարարու-
թիւնները բնաւ կասկած չեն թողուր
այն երկիրներուն ապագային վրայ,
որը Ռուսիոյ երկաթի լուծին ներքեւ
մանկու դժբաղդութիւնն ունին :
Աքսաքովի բառ թէ Ռուսիոյ զենքե-
րը Սլավեան քաղաքակրթութիւնն
ու մտաւորական մշակութիւնը պիտի
ծառայեն հակառակ Եւրոպական քա-
ղաքակրթութեան : Բողոնիոյ և Ռու-
սական Հայաստանի օրինակը բաւա-
կան է Ռուսիոյ տարածելու քաղաք-
եան քաղաքակրթութեան ետեւներ
հասկնելու, որ կը նշանակէ ազգայ-
նութեան ջնջում, կարծեաց և խղ-
ճի ազատութեան բռնաբարում, բա-
րոյական և մտաւորական գերութիւն :
Արդ՝ թուրքիոյ Հայերն, ինչ որ ալ
ըլլան հին գրութեան զեղծութիւնն,
անուրանալի է որ մտաւորապէս մեծ
ազատութիւններ վայելեցին, այսօր
կայսերական կառավարութեան ստա-
յած արտօնութեանց շնորհիւ՝ ազատ
վարժարաններ, ազատ մասնաւ մը,
ազգային ներքին սահմանադրութիւն
մ'ունին, կառավարութիւնը բնաւ
արդէք չըլլար իրենց ինքնուրոյն զար-
գացման, և եթէ տակաւին չկրնան
պէտք եղածին չափ զարգանալ, ա-
սոր ալ պատճառն իրենց ներքին պա-
ռասիրութիւնն ու տկարութիւնն և
զած է : Հայերն այս ազատութեան

շնորհիւ արեւմտեան քաղաքակրթու-
թեան սկզբնայ վարժեցան, և Եւ-
րոպայի համակրութիւնն իրենց վրայ
գրաւել սկսան : քանզի թէ՛ Օսման-
եան տէրութիւնն և թէ՛ Եւրոպա-
յայապի աշխարհ, գործունեաց և
քաղաքակրթութեան յարմար ժողո-
վրդի մը պէտք ունին Ասիոյ մէջ վա-
ճառականութիւնն ու արուեստները
տարածելու համար : Հայերը թուր-
քիոյ մէջ մեծ գեր մ'ունին կատա-
րելիք իրեն քաղաքակրթութեան
գործակատարներ : Արդ փախաքի՞
է, արժան է որ այս փառաւոր ա-
պագայի զոհուի Ռուսիոյ փառաւոր-
ութեան, և Հայք որ արդէն Եւրո-
պական քաղաքակրթութեան ու ա-
զատութեան ճաշակն աւանդ սկսած
են, կրնա՞ն սահմանադրական վա-
րժութեան զրկուելով Ռուսիոյ բռնա-
պետութեան յանձնուիլ : Ահա այս
խնդիրն ամեն լուրջ միտքերու խոր-
հորդածութեանց արժանի է, և մեք
կը փութանք այժմէն Եւրոպիոյ և
թուրքիոյ պետական մարդոց խորին
ուշադրութեան յանձնել :

ՊԱՏԵՐԱԶԳԱՆ ԼՈՒՐԵՐ

Ներսիսը պարենաւորելու համար
Տուկայի կիրճերուն մէջ գործող Սիւ-
լէյան փաշան մայիս 27 թուով կը
հեռագրէ առ պատերազմական գոր-
ծոց նախարարն թէ Բրիտանիան 45
վաշտ Օսմ. զօրք քանի մը թիւի բաժ-
նաւոր թիվայի վրայ զրկուեալ են,
որք չորս օր շարունակ հարատուցուց
հետ կռուելով, լեռներուն վրայ ա-
նոնց բռնած հզօր դիրքերը գրաւե-
րն : Գարատաղցիք քանի մը տեղերէ
առանց կռուի ետ քաշուեալ են, բայց
քանի մը տեղ ալ սաստիկ դիմադրու-
թիւն ընելով յաղթուեալ փախեալ են
մեծ կորուստով : Օսմանեան զօրքն
այս չորս աւուր կռիւներուն մէջ ընդ-
ամենը 35 մեռեալ և 57 վիրաւոր ու-
նեցեր են :

Պոսնիոյ կուսակալութեան Միւս-
թէշար կոստան փաշայէն եկած հե-
ռագիր մ'Աւստրիոյ սահմանադիրն
մօտ դուրս գործող խումբ մ'առա-
դակաց հետ կայսերական զօրաց մէկ
կուիւր կը ծանուցանէ, որոյ մէջ ու-
ղերն յաղթուելով մէկ քանին մեռե-
րն : Բայց, կը յաւելու յիշեալ հեռա-
գիրն, Աւստրիոյ սահմանապահ զօր-
քերն Օսմանեան զօրաց վրայ կրակ
ըրեր են :

Սոխումէն ալ Ֆաղլը փաշան լուր
կուսայ թէ Վերհ. Սուլթանին երկրորդ
անուն զօրադուլդին մէկ վաշտ հոն
հասնելով, Բոսոր գետին հարաւա-
կալմը բանակեալ 500 խաղախներու
վրայ յարձակեր, և զանոնք փախու-
ցեր են :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտրա 14 յունիս.
Երեսփոխանաց ժողովին մէջ Սըր Սթաֆֆորտ Նորթփոթ ըստ թէ կառավարութիւնը Սուէիչի ջրանցին նկատմամբ Ռուսիոյ պատասխանն ստացաւ: Ռուսիա կը յայտնէ թէ ջրանցը չպիտի պաշարէ, ոչ ալ անոր նաւարկութիւնը պիտի արգիլէ կամ արգիլելու սպառնալիք ընէ:

Փարիս 14 յունիս.
Չախակողմերը պիւտժէն չքուէարկելու որոշում ըրած ըլլալով, հաւանական է որ ժողովին գումարումը խիստ կարճատե պիտի ըլլայ: Հետեւաբար գալ շարժու ժողովը պիտի լուծուի:

Ռուսական Սվէթանա և Բէթրուալ լովքերը պատերազմական նաւերն երէկ Պրէսթէն մեկնեցան՝ առանց ուր երթալնին յայտնի ըլլալու:

Պէլկրատ 14 յունիս.
Միլան իշխանն այսօր Ռուսմանիա գլնաց:

Իշխանին հրամանադրով Սղդային ժողովն յառաջիկայ յուլիս 1ին (Ն. Տ.) Գըրակիւնէվաց պիտի գումարի:

Լոնտրա 15 յունիս.
Լոնտրայի քաղաքապետական խորհուրդն Ամերիկայի Միացեալ Նահանգաց նախար. նախագահ Կրանթ զօրավարն ընդունելով, Լոնտրայի քաղաքացիութեան իրաւունք ընծայեց անոր, և Ամերիկայի նկատմամբ Անգլիոյ ունեցած սրտագին համակրութիւնն յայտնեց:

Լոնտրա 15 յունիս.

Օտ. Բոնս.	8 9/16
Փոխ.	4865 8 5/8
• 4869	9
• 4871	35
• 4872	14 1/4
• 4873	8 1/2
• Եղիպտ.	40 1/2
Անգլ. Բոնս.	94 11/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կայսերական հրամանաւ.
Սուրբ կուսակալ Զիա փաշան Գոնեայի կուսակալ անուանեցաւ փոխանակ Էսմէր Ֆէվիլի փաշային՝ որ Սուրբ կուսակալ անուանեցաւ:

Մուսթաֆա Թէվֆիկ փաշան Կարսի հրամանատար անուանելով հինգշաբթի օրը մեկնեցաւ մայրաքաղաքէն:

Կարինէն Լէվընթ Զէրլարի ուղղեալ հեռագրի մը խօսքին նայելով, Ռուսերն անցեալ ուրբաթ և շաբաթ օրերն այլ և այլ կողմերէ Կարսի վերայ յարձակում ըրեր, բայց ետ մըդւեր են:

Պէլկրատէն լուր կուտան Եւրոպական լրագրաց թէ Սերվիայիք Ալբանացիները ամրութիւնները վերստին յինել սկսած են ամենամեծ փութաջանութեամբ:

Կ. Պոլսոյ ցամաքային ամրութեանց չինութիւնն այս շաբթու սկսաւ: Առաջին պատնէշն Աթիբիլիար գիւղի մօտէն չինուիլ սկսաւ և վեհ. Սուլթանին անուամբ Համիտիէ կոչուեցաւ:

Օսմանեան խմայիլ շողենաւ Սուլթանի առջև գերի բռնուած վեց Ռուս նաւատորները Կ. Պոլսի բերաւ: Յիշեալ գերիներն արքունի նաւարանը տարուեցան, և մէջերէն միոյն՝ սպայ ըլլալուն (Գօլ աղասի) համար՝ պատշաճ բնակարան մը տրուեցաւ՝ ամեն պիտոյքը հոգացուելով:

Կայսերական կառավարութիւնը Սուէիչի ջրանցին նկատմամբ Անգլիոյ դեռպանին կողմէ եղած զեկուցման պատասխանեց թէ Անգլիոյ կարծեաց համամիտ չլրնար ըլլալ, և թէ Ռուսական նաւ մեթէ ջրանցին մէջ մտնէ, կռու պիտի ըլլայ հոն:

Պուլդարաց նորընտիր Էկզարքն հինգշաբթի օրը վեհ. Սուլթանին ներկայանալու պատիւ ունեցաւ: Յետոյ հանդիսի Բ. Գուսն երթալով սյցեւութիւն տուաւ Սիւն-Էպարքոսին և արտաքին գործոց նախարարին:

Այս առթիւ առաջին կարգի Մեծիորդէ պատուանշան մը տրուեցաւ Էկզարքին:

Սթանպուլ լրագրին Հայաստանի Բիւրաներուն Ռուսաց կողմը բռնելը յիշելէ ետեւ կրէ թէ Վիեննայի Զօրավար Բիւրաներուն հին բարեկամէն է: Գրքի պատերազմէն ետեւ երբ ինքը գնաւ գնդապետի աստիճան ունէր, Թուրք պաշտօնատաւրաց հետ Բիւրա ցեղերուն բանակեղերը պտըտելու երթալով, կարգէ գուրս համակրութեամբ ընդունւեր էր Բիւրա պէյերէն իբրեւ վաղիմ բարեկամ: Իսկ անոր հետ գլխուն ող Թուրք պաշտօնատարներն իբրեւ օտարական կը նկատուէին: Միւլթաքօ ոչ միայն Բիւրա պէյերուն իւրաքանչիւրին անունները, բնականաբաններն ու սովորութիւնները գիտէր, այլ և իւրաքանչիւր ցեղին մէջ գտնուող և քաղութեամբ կամ ձիւրկութեամբ նշանաւոր եղող երիտասարդներն ալ յականէ յանունէ կը ճանչէր, ինչպէս նաեւ պէյերուն կանայքն ու օրգիւքը: Այս մտերմութիւնը կամ մանաւանդ. Ռուսական ազգեցութիւնն անշուշտ այն ժամանակէն մինչև ցարդ շարունակուած է քրեւորներուն մէջ:

Յունաց Նեօթոս լրագրին հետեւեալ նոյնպիսի տեղեւորութիւնը կը պատմէ.

«Երկու տրեւալ հայազգիք, Թոմարզալը Պոզոս և Բէթթաշեալը Նազար, երկուշաբթի իրիկուն ժամին միջոցները Պէթթաշէրէի Զայիլին մօտ յոյն պատանեւոյ մը հանդիպելով՝ կը բռնեն զայն և իրենց դադանակն կիւրքը յազգեցնել կուղեն տնոր վրայ: Պատանին աստիկ դիմադրելով ընկելով օճաղ օրմներէն մին դանակը կը քայէ և պատանին կը վիրաւորէ: Պատանեւոյ մայրն և փեսացուն՝ վիրաւորեցին ազաղակը լսելով՝ օգնու իջան կը վազեն, և փեսացուն կը յաջողի չարագործներէն մին բռնելու: Բայց միւս ընկերը զայն ազատելու համար դանակը փեսացուն վրայ կը խօթէ: Միանգամայն պատանեւոյ դժբաղդ մայրն ալ ճանրապէս կը վիրաւորէ ու կը վախչի: Փեսացուն քանի մը ժամ ետքը կը մեռնի: Իսկ վիրաւորեալ պատանին ու մայրը մահուան վտանգի մէջ են:

«Երկու օճաղագործները Պէթթաշէրէի ստիկանութեան ձեռք բռնուեցան:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Է Ս Չ Ս Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է

3 յունիս. ուրբաթ իրիկուն	9,28
4 յունիս. շաբաթ առաւօտ	9,28
բացուեցաւ	9,28
ժամ 6 ին	9,28
Բուսնի երկաթուղի	Փր. 24 25
Թղթաղաւ	Լր. 180
ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵՊՈՅ	
Կ. Պոլսի 3 ցունիս	
Սուիթթէ Զէնկալի բաժ. Անգլ. լր.	2,27
• Փոխանակութեան	4,25
Կ. Պոլսոյ Պաշային	2,24
Քրէտի Զէնկալ	1,30
Քրէտի Օսթրո-Թուրք	
Փոխ. 1863	51
• 1865	51
• 1869	46
• 1872	45
• 1873	45
Թրամուայ	Օտ. լր. 1 20

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Երէկ աղբային ժողովն յուզեալ խիստ մ'ունեցաւ Գումբափուրի Մայր եկեղեցին:

Ատենը ժամ 7 1/2 ին բացուելով, նախընթաց քանի մը նիստերուն ատենագրութիւնները վաւերանայէ և քանի մ'ալ առաջարկութիւններ կարդացուեցին ետեւ, ներկայ տարւոյն պիւտժէն, զոր հրաժարեալ Գաղ. ժողովը բերած էր, համարակալութեան գլխանին քննութեանը զրկուեցաւ:

Անմիջապէս յետոյ ժողովն օրա.

կարգին անցնելով, որ էր Գաղ. ժողովն հրաժարականին խնդիրն, իրաւասութեան գլխանին կողմէ ներկայացեալ տեղեկագրի մ'եղրակացութեան համեմատ՝ հրաժարականը քուէի դրուելով 20ի դէմ 38 քուէով ընդունուեցաւ:

Քուէարկութեան այս տրդիւնքին վրայ՝ Ս. Պատրիարք հայրն ոտքի վրայ ելնելով յայտնեց թէ ինք ալ կը հրաժարի պատրիարքութենէ և մեկնեցաւ ժողովէն:

Այս ծանր և շատերուն համար անակնկալ իրողութիւնը բնականաբար մեծ սրտայուզութիւն պատճառեց երեսփոխանաց ամենամեծ մասին, և անմիջապէս առաջարկուեցաւ քուէի գնել Ս. Պատրիարք հօր հրաժարականն, որ երկու երեք քուէի դէմ՝ միաձայնութեամբ չընդունուեցաւ:

Ասոր վրայ ժողովին կողմէն եկեղեցականներէ և աշխարհականներէ խառն պատգամաւորութիւն մը զրկուեցաւ Ն. Սրբազնութեան, որպէս զի ներկայ ամենավտիւկ պարագայի մէջ հրաժարական տալուն ազգավընաս հետեւանքները նկատել տալով՝ ետ առնու հաւաքին:

Պատգամաւորք Ն. Սրբազնութեան ներկայանալով՝ մեծ դժուարութեամբ և բազում թխնամանքով յաջողեցան հաճեցնել Ն. Սրբազնութիւնը խորհրդարան իջնելու, ուր առանց իւր նախագահական աթոռը նստելու՝ հրաժարման գլխաւոր կամ մանաւանդ միակ պատճառ ցոյց տրուաւ ժողովին մէջ տիրող երկպառակութեան ոգին, որ կարծեաց հիմնաւոր կամ անհիմն տարբերութեան սահմանէն ելնելով թշնամութեան ու ատելութեան փոխուած է, որով ժողովը փցուն վէճերով ու կռիւներով ժամանակ կանցունէր՝ ի վնաս ազգային կենսական խնդրոց, և իւր խօսքերն ու յորդորանքներն անլրանելի կըլլային, Էւտու արար այս վիճակին մէջ անհնար էր իրեն Պատրիարքական պաշտօն վարել:

Ատենապետ փաշան պատասխանեց Ս. Պատրիարքին թէ ժողովը միշտ կը յարդէ զինքն իբրեւ սահմանադրական Պատրիարք Հայոց. իսկ լիմ խօսքս լսելի չըլլար՝ ըսելը միապետական դիտում կենթադրէ, զոր ոչ ոք կրնայ ընդունիլ և այլն: Ժողովականներէն շատեր չորդքեցին Ատենապետ փաշային այս խօսքերուն դէմ: Ս. Պատրիարքին խօսքերուն միտքը սխալ կը մեկնէին: Ս. Պատրիարքն ուղեց պատասխանել, բայց Ատենապետ փաշան յայտնելով թէ իւր մեկնելու ժամանակն ալ հասած է, դուրս ելաւ գնաց՝ ատենապետական աթոռը Նուրեան էֆենտիի թողով:

Պահ մը տիրած չլիթութիւնն հանդարտելէ ետեւ, քանի մ'երեսփոխանը Ատենապետ փաշային խօսքերուն տխուր ազդեցութիւնը ցրելու ջանացին, որոց վրայ մեծապէս յուշեալ էր Ս. Պատրիարքը:

Ի վերջոյ Ն. Սրբազնութիւնը խօսք առնելով, յայտնեց թէ իւր պաշտօնն այս պայմանաւ միայն յանձն կուանու շարունակել որ երեսփոխանը:

* Նախընթաց նստին մէջ՝ Ատենապետ փաշան՝ աղբային ժողովոյ կանոնադրութիւնն ի ձեռին յայտարարած էր թէ Գաղ. ժողովոյ հրաժարականն եթէ պատճառաբանեալ նկատուի՝ Կրտստութեան զիւանդն քննութեան պիտի յանձնուի: Իսկ եթէ պարզ նկատուի՝ օրակարգը պիտի անցնի: Սոյն յայտարարութեան հակառակ, Ն. Վսեմութիւնն՝ ինքիմէ իրաւասութեան գլխանին զրկելէ հըրաժարականի խնդիրն, և այն զիւանդն ալ որուն ատենապետն է Իվիլիքեան Մատթէոս Եպիսկոպոսն, և անդամները Ղազարոսեան Գրիգորոսուր և Պէլիքեան Ալիքսան էֆենտիները, հրաժարականն ընդունելու եղրակացութիւն տուեր էին:

միմեանց գէմ՝ հակառակութիւնն թշնամութիւնը մէկգի թողով՝ յօգուտ աղբին միայն աշխատին միաբան ոգւով: Եթէ, ըսաւ, ամենափոքր հակառակութեան ցոյց մը տեսնեմ, հաս դորմ չունիմ: Երեսփոխաններէն շատեր յայտարարեցին թէ իրարու դէմ թշնամութիւն կամ ատելութիւն բնաւ չունին:

Ի վերջոյ որոշուեցաւ որ յառաջիկայ ուրբաթ օրը գլխաւոր ատենապետները Ս. Պատրիարքին երթալով՝ նոր Գաղ. ժողովոյ մ'ընտրութեան համար ընտրելաց ցանկ պատրաստեն, և 15 օրէն ալ ազգային ժողովը գումարուելով ընտրութիւնը կատարէ:

Փարիզէն Արժ. Տ. Ղևնդ. Ծ. վարդապետ փրկալէմեան այս առաւօտ հեռագիր մ'ուղղած է առ Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրն՝ ծանուցանելով թէ Գեր. Տ. Սրբազն վարդապետ Թեոդորեան՝ երէկ՝ Յունիս 3/15 վախճանել է, և թէ վսեմ. Գեորգ պէյ Երամեան՝ յուզարկաւորութեան բախմբակ ծախքը հոգացեր է:

Լոյս Հանդիսին անցեալ շաբաթ առուր թուոյն մէջ հետեւեալ ողջախոհ յօդուածը կըկարդանք, որ Ազգ. ժողովոյ անգամ եղող եկեղեցական Ս. Հարց ուղղեալ է, և երանի թէ ազգեցութիւն ունենար անոնց մէկ քանիին վրայ, որք ինքզինքնին Աւետարանի պաշտօնեայ կը կոչէն, բայց գործով խիստ հեռի են Աւետարանին ուսուցած սիրոյ, խաղաղութեան և հեղութեան հոգիէն:

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ՄԷՋ ԻՆՉ ԸՆԹԱՅՔ ԲՈՒՆԵԼՈՒ ԵՆ ԵԿԵՂԵՅՍԱՅԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

Հարցումնիս օրափ հետաքրքրական, պատասխաննիս ալ այնչափ պարզ է և օգտակար: Եթէ առողջ մտօք նկատուի, Մեք մեր եկեղեցական Հայրերն հարուածելու կամ անոնց ընթացքն խտուր քննադատելու մըտադիւր չենք, քաւ լիցի, բայց երբ կը կշռենք մեր և իրենց կառնն և պաշտօնն, կ'զգանք թէ մեծ պարտականութիւններ ունինք՝ ինչպէս եկեղեցւոյ առաջ՝ նոյնպէս երեսփոխանական ժողովոյ մէջ:

Ամենուս յայտնի է որ մեր Ազգ. երեսփոխանութիւնն աջադիւրս և յաջողութեամբ կա' յառաջդիւրս և յառաջդիւրս կուսակցութեանց բաժանեալ է մի քանի տարիէ ի վեր: Այս կուսակցական ոգին թէ և բարի Նըպատակի մը համար ծագումն առած ըլլայ Ազգին օգտին համար, բայց արդարութեամբ խօսելով՝ ատելութենէ և յուսի կրքերէ զերծ չէ, ինչպէս կը տեսնուի ամեն խնդրոց և քուէարկութեանց մէջ:

Այս ցաւալի վիճակն քալ ճանշնալով Սրբազան Պատրիարք հայրն, այս անգամ բացման ճառին մէջ ցաւ յայտնելով, ըսաւ թէ «Երէւ երեք կուսակցութիւն կը տեսնեմ ձեր մէջ. թէ և ամենուն նպատակն բարի և Ազգին օգտին նուիրեալ, սակայն ինչո՞ւ զիրար թշնամանէք, նախատէք և կրկնք վառիք իրարու դէմ... Ես անարժանութեամբ իբրեւ ձեր Պատրիարք կըսեմ ձեզ, որ իմ յաճախ հրաժարական տարու գլխաւոր պատճառներէն մէկն ալ ձեր այդ երկպառակութիւնն է: Ուստի կաղաչեմ, կը պաղատիմ՝ ամեն մէկերն ուղ' վանեցէք, հեռացուցէք ձեր սրտերէն ատելութիւնն, անմիաբանութիւնն և ծայրայեղ կրքերն, որ ամեն բարի նպատակներ վեր ի վայր կը տապալեն»:

Բարձրաշնորհ Սրբազան Պատրի-

արք Զօյրն իւր տը խորատական յոր-
դորմն կը փախաւքէր միայնել կու-
տակցութեանց ոգին և Ազգին իրա-
կան շահերուն վերայ հիմնել, վա-
սըն զի գիտէր որ իւրաքանչիւրին
նորտակն բարի է, բայց ծայրայեղ
միջոցներով յայն ժամանակէ կ'զգու-
շայնէր. պահ մի յետոյ նոյն նիստին
մէջ միջանկեալ գէտը մը առիթ տը-
ւաւ մի քանի երեսփոխանաց ըսելու
թէ՝ «Կուտակցութիւնը անհրաժեշտ
պետք էն, որպէս զի ամեն գաղտ-
նիք ու դարձածք յայտնուին, և
իւրաքանչիւր ըստ այնմ շարժի բարի
նախանձաւորութեամբ»:

Ինչիւ թէ այս յայտարարութիւնն
անկեղծ որտի մը զգացմանց արտա-
յայտութիւնն եղած ըլլար, և ինչիւ
թէ կուտակցութիւնը այս ճշմարտու-
թեան ճանրուն մէջ որոնելին Ազգին
պատիւն և շահը:

Հարկ չկայ մեզ բնաւ թէ Ազգ-
ժողովոյ այս կերպ կուտակցական բա-
ժանումն օգտակար է թէ վնասա-
կար. ազգասիրական նախանձալու-
ղութիւնէ՝ ծագումն առած է՝ թէ
զանազան նկատմունքներու ծնունդ և
անհատական շահերու արգասիք մի-
այն սա ճշմարիտ գիտենք և համար-
ձակ կրնանք ըսել թէ մեր Ազգ- ժո-
ղովոյ կուտակցութիւնն Ազգիւն, Գաղ-
ղիոյ, Գերմանիոյ և այլ եւրոպական
ազգաց խորհրդարաններու կուտակ-
ցութեանց հակառակն է. անոնցը
անյողգողք և յարատեւ սկզբուն մի
արգասիք է, իսկ մերն յողգողք և
առժամանակեայ գիտաց արգիւնք.
անոնց կուտակցութեան անգամանե-
րուն իւրաքանչիւրն ինքիւն մէջ հա-
ւասար գիտակցութիւն, հաւասար
խորհուրդ և հաւասար կամք ունին.
իսկ մեր երեսփոխանական կուտակ-
ցութեանց մէջ մէկ քանի ճարտարա-
խօս երեսփոխաններ կան, որ լեզու
բերան չունեցող մեծամասնութեան
ձայնն ու քուէն շատ անգամ կորցել
կը յաջոյն:

Այս անսովորութեամբ մեր եկեղե-
ցական երեսփոխանաց մէկ մասն ա-
նկազմեան և մէկ մասն ալ ձախա-
կողմեան կուտակցութեան յարեալ
են, ոմանք անգիտութեամբ և ո-
մանք ալ փառք, խաչ, Պաշտօն և
թագ մարտու ակնկալութեամբ,
մինչդեռ եկեղեցականաց համար ոչ
ալ ըլլալու է և ոչ ձախ: Մեր եկե-
ղեցական երեսփոխանները չվիրաւ-
րելու համար կը սեղմենք մեր գը-
րիչն և չենք մանաւ մանրամասնու-
թեանց. այլ մեր հարցման պա-
տասխանին գաղով կըսենք թէ եկե-
ղեցական երեսփոխաններն ուղիղ ըն-
թացք մի բռնելու են Ազգ- ժողովոյ
մէջ, զի անոնց համար ներքին չէ ալ
կամ ձախ կուտակցութեան յարիւ.
անոնց համար կուտակցութիւն չկայ,
այլ ամեն կուտակցութեանց անխը-
տիր հաւասար մարդն ըլլալու են ըստ
ինդրոյն և ըստ պարագային:

Ազգ- ժողովոյ մէջ Հայ եկեղե-
ցականութիւնը 20 ձայն և քուէ ու-
նի. այս թիւն ո՛ր կուտակցութեան
թուոյն վրայ աւելնայ, անտարակոյս
այն կողմը քուէից բացարձակ առա-
ւելութիւն մի կարատեղիք է: Բայց երբ
— երբ ինքիւր, կուգէ ալին կող-
մանէ առաջարկեալ ըլլայ կուգէ ձա-
խին, ընդհանուր Ազգին համար բա-
րի է և օգտակար:

Այս կէտը մի քիչ աւելի պարզե-
լով վերջացնենք:

Երթալունք թէ Ազգ- ժողովոյ
նոյն նստին մէջ երկու առաջարկու-
թիւններ ըլլան զատ զատ, մին առա-
կողմէն և միւսն ալ ձախակողմէն.
Եթէ այս առաջարկութիւններն խո-
հական տեսութեամբ մի օրինակ աղ-
գին օգտակար են, եկեղեցական ե-

րեսփոխաններն առանց խորութեան
պարտականութիւնն ունին երկու քը-
ւէարկութեան մէջ ալ իրենց հաճու-
թեան քուէն առաջ. իսկ եթէ երկու
կողմէն առաջարկութիւններն ալ վը-
նաստար ըլլան, պարտաւոր են հա-
ւասար մերժել: ոչ Պօղոս և ոչ Ագոգոս
խորհելով:

Եթէ մեր եկեղեցական երեսփո-
խաններն այս սկզբունքն իրենց նը-
շանաւորեն ըստինքն, անտարակոյս
ընդհանուր ժողովոյ մէջ արգարտու-
թեան կշիռ մը պիտի ըլլան ի շահ և
կեղեցւոյ և աղքին, ժիւղամայն
իւրաքանչիւր կուտակցութեան նա-
խանձելի օրինակ մը պիտի ընծայեն...

ԱՍԻԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒՄԻ ԵՒ
ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
(Եւր. ԴԵՒ ԲԷ՝ 1982)

Եփրատայ արեւմտեան ճիւղը (Գարա-
սու Գաղ գետ) կ'սկսի Կարնոյ հիւսիսա-
կողմը Տուփու լեռնէն, կը վազէ Էրզրու-
մի գաղտին մէջ գէտ ի յարեւմտու մի-
շն Թօթոյ գետը, յետոյ հարաւ կողմի
և կը ժամանէ Երզնկայի մօտ. Կամախէն
վար գետը կանցնի Անտիոքի կիրճը.
բէն, Արմէն, Մալաթիոյ գաղտէն և վեր-
ջագէտ Տօրոսի կիրճերէն, յորմէ յետոյ
կը միանայ Արածանոյ հետ: Եփրատայ
այս ճիւղն ալ կողմէն կընդունի շատ մը
փոսիկներ՝ որոնք կարեւորութիւն չունին.
իսկ ձախ կողմէն մէջը կը վազեն 1. Կար-
նոյ քաղաքէն անցած փոսիկը. 2. Գերման
չալը, որ կը բլիթ Բալանտէօքէնէն. 3. Գի-
նիկէօլ Սույու (Չուր Կեղոյ կամ Օրոր
գետակ), որ կանցնի Կեղոյ քովէն:

Չորովը (Տաճկերէն Զիւրիք-Սու) կը
ձևացնէ Սե ժողովու առաջանք Պարսա-
ր, Սպիտի և Սօղանլի լեռանց մէջ փակուած.
այս ընդհանրապէս լեռնոտ երկիր մ'է.
Ջրերն ալ հեղեղներն են: Չորովը կ'սկսի
Սպիտու լեռներէն. նախ կը վազէ գէտ ի
յարեւմտու միշն Բալանտէօք, որ կիսա-
չըման մը գծելով կը գաւառայ արեւելք և
ի վերջոյ հիւսիս. այստեղ կանցնի Սպե-
րի, Արգուէնի մօտէն և կը թափի ի Սե
ժող Պարսի միջով: Չորովը ձորը բարե-
բեր ու աղէկ ձգակուած է, միջին ու ըս-
տորին մասերն այդեռ անտէր ու պողա-
տու ձաւեր են, շատ տեղերն ալ ան-
տառներով ծածկուած: Լայնութիւնն է
40էն մինչեւ 75 մետր, բայց Արգուէնի
վեր միայն զիւրեք ժամուր առանց կամուր-
ջի կրնայ անցնել: Ալ կողմէն Չորովը
կընդունի 4. Թօթի մի գետակն, որ կը
բլիթ Տուփու-Տաղէն. ասոր ալ ձորը բա-
րեբեր է, և բայ ի ձիւթներէն՝ ամեն աւ-
տակ սրտուղ յառաջ կը բերէ. 2. Օլթիի գե-
տակն, որ կ'սկսի բազմաթիւ ճիւղերով
Տուփուի և Սօղանլի լեռներէն, կանցնի
ի Նախիման, յորմէ վար կըն-
գունի Պարսի գիւ ու Բէննէքի Ջրերը և կը
թափի Չորովի մէջ՝ իշխան գիւղաքաղա-
քին մօտ. 5. Արտանուշի փոսիկը. 4. Ա-
ճարա, որ կը բլիթ Ռուսիոյ սահմանա-
գիծի լեռներէն, կը թափէ համանուն նա-
հանգիւն և կանցնի Գըզ-Գաղտի ըստած
կիսակործան գետակին մօտէն:

Կուր գետոյն առաջանքն առայժմ
Թուրքիոյ մէջ փոքր երկրէ մը կը բաղկա-
նայ. այս նշանաւոր գետը ծագում կառ-
նու Գանլը և Սօղանլի լեռներէն բաղմա-
թիւ ճիւղերով. նախ բարձր ու բարեբեր
գաղտի մը մէջ կը վազէ հեղեղի նման:
Այսպէս կը վազէ Արտահանի քովէն, յե-
տոյ կանցնի ի Բուսիս և Իերթոյ Սե-
լըլցիս, որ ձորը կ'սկսի նեղուիլ բարձր
լեռներու մէջ. վրան քիչ կամովը կոյ,
բայց շատ տեղերէն կանցնուի գիւրու-
թեամբ:

Այս գետերն անոչուտ նաւարկութեան
զիւրեքութիւն չեն մատուցաներ, բայց կըր-
նան յանկարծ ջրերուն աճման առեւն,
մեծ բանակներու շարժմանց արգելք յա-
րուցանել: Հայոց գաղտերն ամենուրեք
զժողարանաւոր լեռներով չընթացա-
ռած՝ բնական ամրութիւններ են, որոց
կիրճերը բաւական է պաշտպանել: Ամե-
նէն կարեւոր գաղտերն են՝ Կարնոյ, Կար-
սի, Երզնկայի, Պալէգիսի, Հասան Գա-
լիի և Մալ գաղտերը:

Ռուսական դաւաճանքն Օսմանեան
Հայաստանէն բաժնուած են 1829 ի պա-
տարաւոր զաւթագրով. այս սահմանը
Մարմինն սկսելով Կերթայ նախ գէտ ի
յարեւմտու միշն, ապա ըստած լեռանց
վրայ. յետոյ կը գաւառայ ի հիւսիս և կը
մտնենայ Երթալոյ ընթացքին, որ Սե-
լըլցիսի գետովը կ'սկսի բաժնուիլ երկու
տեղութիւնները միշն. Փառաւոն (Չըլ-
սըր) լինի հիւսիսակողմը. այնուհետեւ բա-
ժանման գիծը կերթայ Կուրի ընթացքին
վրայ, կուրուի վրայ ինչ ի հիւսիս և
կը վազէ լեռանց վրայ Կուրի ընթացքին
զուգահեռապէս. ի վերջոյ կ'ընայ ի Սե-
ժող, որ Ենիքէթիլ անուամբ վարք գե-
տակը կորոյն սահմանը:

Օսմանեաց կողմէն այս սահմանը
պաշտպանուած է Պարսիս, Արտահանի
և Կարսի ամրութեամբ, որք պատերազ-
մական առաջին գծին զլսաւոր բերդա-
քաղաքները կը կազմեն: Պարսիսի ամ-
րութիւնները վերջերս մեծ կարեւորու-
թիւն առին. Կարս աշտար գիւղ մ'է.
միայն Կուր գետոյն ձորը, զոր կը պաշ-
տան Արտահան Ռուսաց զիւրաւարաց
կրնայ համարուիլ, քանի որ 1829 էն ի
վեր Սելըլցիս, Սուլթանի և Արտաշաղք
իրենց ձեռքն են:

Պ. Ա.

ՀԵՐԷՆԷ ԲԵՆԷՂ

Խմբագիր.

Եթէ արդարեւ խմբագիրը ձրի
աղբային պաշտօնէից խումբ մը կը
կազմեն, Եթէ իրաւ խմբագիրը աղ-
բային յառաջդիմութեան ջանադիր
առաջնորդներն են, և եթէ հաւաս-
տիւ մասնաւոր լուսաւորեալ աղբայ-
քայլափոխիցը խրախոյսն եղած է, քա-
ղաքներէն զիս ձեռ անձնական ար-
ժանեօքը՝ ծանուցանելով սիրելի աղ-
բին որ այդ անձնուէր ոգւով ձեռ
արդարութեան անուն չարախա-
թութեամբ հրապարակ կ'ընեն՝ նը-
խարկան նշանաբանիս հաւատարիմ
մնալու ու խալի իմ ծառայութիւնս
նուիրելու:

Առաջին թերթը պիտի հրատա-
րակուի յուլիսին կամ անկէ առաջ՝
Եթէ յաջողիմ պարտաւորութեանս
մէջ:

Բաժանորդագիրը պիտի ըլլայ
Պոլսոյ համար 30 և գաւառացի հա-
մար 65 զրջ ուղ թղթագրամ:

Իւրաքանչիւր թերթ ձեռքէ պի-
տի վաճառի 4 զրջոց թղթագրամի:
Թերթիս գիրքը սովորական լը-
րագիրներէ քիչ մ'աւելի մեծ պիտի
ըլլայ, որ բաժանորդաց աւելնալովը
աւելի պիտի ընդարձակի:

Որ և իցէ նամակ պէտք է վճար-
եալ ուղղուի առ տէր և հրատարա-
կիչ ի գրատուն Թ. Մարգարեան Կ.
Պօլիս Մէրճան շարչու:

77 Գոսիս 3 ԵՆԱՆ ԳՈՐԱԳՈՐ

ՆԱԽՆԵՐՈՒՄ

Տոբթոր Ս. Յակոբեան էֆէնտի՝
վկայեալ բժիշկն իւր բնակութիւնը
Գատը գետի Հայոց եկեղեցւոյն ետեւի
փողոցը թիւ 2 տունը փոխադրած ըլ-
լալով, կը փութայ ծանուցանել թէ
իւր խնամոց պէտք ունեցողները կըր-
նան զինքը գտնել իւր բնակարանն,
ուր երեքշաբթի և ուրբաթ օրերն
ալ առաւօտէն մինչեւ ժամ 3 պատ-
րաստ է առ ինքն զիմով հիւանդնե-
րը ձրիապէս դարմանելու:

Ի Ա Ն

Քաղն քանադաշտան մամուլ 1
նիւմբը չուվալ առէտ 10000 պէհէրի
9 զրու 30 փարա:

Քաղն քանադաշտան մամուլ 2 նիւ-
մբը չուվալ առէտ 10000, պէհէրի
8 զրու 30 փարա:

Ասաքիրի Շահանէ Էյպիսէ անպարը
իւրն իւրն ճամի հալլուսքնա հէման

Թէսլիմ օլունմագ վէ պօշապը մագ-
պուզ վիլուսինալ երկրլը Գայիմէ
400 զրու շա օլարաք պէր վէհէրի փէ-
շին Նիլամիյէ խաղինէսինալէ իմա
Գըլլունմագ շարթըլըա ֆիւսաթը մու-
րադ գամէլէրի իլէ պալատէ մուրադ-
գամ իքի գալէմ չուվալ թալիպի Էօհ-
տէսինալ օլուզ հաղրանը բուլմինի
ալթընէր փաղար Էրթէսի կիւնիւ գա-
րարը գաթիսի վերիլէհէյնալէ, ի-
թա իթմէյէ թալիպ օլունարըն եէվմի
մէգըիւրաէ Տարի Շուրայի առքերիյէ
կէլմէլէրի:

1 հաղիրան 1877
Պապը Աբրահմէրի

Ասաքիրի Շահանէ Էյպիսէ անպա-
րնա 40000 առէտալէ 30000 առէտէ
գատար շուրուի օլուզ մահֆուզ նու-
մունէսի վէհէրիէ մուպայեա օլունա-
ճագ օլուն բուլմէի խալի գըլլըրը
եռն գուշաք թարթիսի գոնթըրըն
61 իննի կիւնիւ թէսլիմէ պալանը
ալթըլա թագսիմիլի պէհէր մահ պիր
թագսիթի թէսլիմ գըլլունմագ վէ պա-
հասը մագպուզ մէնէտէրի վիլուսին-
տէ սիմ մէհիսիյէ 20 զրու շա վէ մէ-
հիսիյէ վերիլմէյէ փիւսալ ֆիւսալ
թըլըլա պ'Լ հիսապ ֆարգը իլէ պէ-
րապէր գայիսէ օլարաք պէր վէհէր
փէշին Նիլամիյէ խաղինէսինալէ վէ-
րիլմէք շարթըլըա պէհէր առէտի
9 1/2 զրու շա թալիպի Էօհտէսինալէ
օլուզ հաղրանը բուլմինի ալթընէր
փաղար Էրթէսի կիւնիւ գաղարը գա-
թիսի վերիլէհէյնալէ, իթալընա թա-
լիպ օլունարըն եէվմի մէգըիւրաէ Տա-
րի Շուրայի առքերիյէ կէլմէլէրի:

1 հաղիրան 1877
Պապը Աբրահմէրի

Պէյգօլ Տէպաղհանէսի իլին մահ-
ֆուզ պուլունան նումունէսի վէհէրիէ
մուպայեա օլունմագ 3000 գանթար
մէշէ քաղուլը թարթիսի գոնթըրըն
տան իթիպարէն ճէսթէ ճէսթէ Սամ-
սոնա Տէրպէնա խաղինէսինալէ մէմու-
րնա թէսլիմ օլունարագ աղթթոս
նիհայէթինալէ արքապը ալընմագ վէ
մէգըիւր խաղինէսինալ տէպաղհանէյէ
գատար վաղ ու պուլմագ մասարի-
ֆի նագլիյէսիլիէ Էնմը կէօմիւրիւ
Նիլամիյէ խաղինէսինալէ պիտ պուլուն-
մագ վէ պահասը մէգըիւր խաղինէսին-
մէմուրնա թէսլիմ օլունարագ երկու-
րիւք գայիմէ 400 զրու օլարաք պէր
վէհէրի փէշին տէպաղհանէ իլին Սամ-
սոն Էմիլիյինալ վերիլէհէյէ օլուն հա-
վալէ ագճէսինալ օլարագ մէմուրը
թարաֆընտան վերիլմէք շարթըլըա
պէհէր գանթարը 28 զրու թալիպի
Էօհտէսինալ օլուզ հաղրանը բուլմի-
նի 4 իննի ճիւմա Էրթէսի կիւնիւ գա-
րարը գաթիսի վերիլէհէյնալէ, ի-
թա իթմէյէ թալիպ օլունարըն եէվմի
մէգըիւրաէ Տարի Շուրայի առքերիյէ
կէլմէլէրի:

30 մայիս 1877
Պապը Աբրահմէրի

Ասաքիրի Շահանէ Էյպիսէ անպարը
թիւմբ վէ սիլարի հայլանաթընա
լուզում կէօրիւնտիկինալէ կէնճ վէ
թիւլանա ետնի պէշ եաշընտան եէ-
տի վէ տօղսուգ եաշընա գատար հէր-
քիլին եէտինալ պու միսիլըա թիւ-
մը վէ սիւլարիյէ Էրթէսի իլին Սայլան
վար իսէ՝ պիւր փաթթա թօղլուտան
թօղլույէ Պապը վալայի հաղրէթը
Աբրահմէրիսէ քեպիլի Նիլամիյէ թահ-
սիլաթ գոմիսիւրնա ճիւմա Էրթէսի
վէ փաղար Էրթէսի վէ չէհարչէնպիհ
կիւնիլէրինալ կէօթիւրիւրալ գաղար-
ըլը գաթ օլունուղի անտէ աղ չէսի
փէշին վերիլէհէյի իլան օլունուր:

1 հաղիրան 1877
Պապը Աբրահմէրի

